# Գետիկ

Բնակչության թիվը՝ 469

Գետիկ բնակավայրը հիմնադրվել է 1923թ: Բնակիչները՝ ընդամենը 20-30 ընտանիք,եկել են Արծվաշեն գյուղից և հիմնադրել Գետիկ գյուղը: Մինչև 1947թ. եղել է Դիլիջանի գավառի,1937-1995թթ. Կրասնոսելսկի շրջանի,1995թ Գեղարքունիքի մարզի վարչական տարածքում:

Հեռավորությունը շրջկենտրոնից 12 կմ է, Երևան քաղաքից՝ 137 կմ: Գյուղը գտնվում է Միափորի և Արեգունի լեռների միջև, Գետիկ գետի հովտում, ծովի մակարդակից 1820 մ բարձրության վրա: Գետիկում գործում է միջնակարգ դպրոց, գրադարան: Բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունը և հողագործությունն է: